

**ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ**

Չի հաջողվում հաստատել Միացյալ Նահանգների (U.S.) քաղաքացիությունը/անձը հաստատել «Social Security Administration»-ի միջոցով

┌	┐
└	┘
Notice Date: _____	
Case Number: _____	
Worker Name: _____	
Worker Number: _____	
Worker Telephone Number: _____	
Office Hours: _____	

ՍՈՒՅՆ ԾԱՆՈՒՑՄԱՍԲ ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ ԵՆՔ ՁԵՁ, ՈՐ ՄԵՁ ՉԻ ՀԱՁՈՂՎՈՒՄ ՀԱՍՏԱՏԵԼ ՁԵՐ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼ ՁԵՐ ԱՆՁԸ «SOCIAL SECURITY ADMINISTRATION»-Ի (SSA) ՄԻՋՈՑՈՎ: ԴԱ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ՀԵՏԵՎՅԱԼ ԱՆՁԱՆՑ.

*Այստեղ նշեք անուն(ներ)ը*

Դաշնային օրենքը պահանջում է, որ «Medi-Cal»-ի այն չազատված դիմորդները և նպաստառուները, ովքեր ասում են, որ իրենք ԱՄՆ քաղաքացի կամ հպատակ են, ԱՄՆ քաղաքացիության/հպատակության և ինքնության ապացույց ներկայացնեն: Դիմորդների և նպաստառուների մեծ մասի դեպքում՝ դա արվում է SSA-ի հետ նրանց տվյալները հաստատելու միջոցով: Սակայն SSA-ը չի կարողացել հաստատել, որ Դուք ԱՄՆ քաղաքացի կամ հպատակ եք:

90 օրվա ընթացքում Դուք պետք է Ձեր գործով զբաղվող շրջանային աշխատակցին Ձեր ԱՄՆ քաղաքացիությունը և ինքնությունը հաստատող ընդունելի փաստաթղթեր տրամադրեք: Դա անհրաժեշտ է, որպեսզի Դուք շարունակեք լիարժեք «Medi-Cal»-ի նպաստներ ստանալ:

- 90-օրյա ժամկետը սկսվում է այս ծանուցման ամսաթվից յոթ օրացուցային օր հետո:
- Այս ծանուցմանը կից տեղեկություն է ուղարկվում այն մասին, թե ինչ փաստաթղթեր են ընդունելի: Խնդրում ենք կարդալ «ԱՄՆ-ի այն քաղաքացիները, ովքեր դիմում են «Medi-Cal»-ի համար, պետք է քաղաքացիության և ինքնության ապացույց ներկայացնեն (DHCS 0001)» կամ «Քաղաքացիության և ինքնության ապացույցը. նոր պահանջներ «Medi-Cal»-ի այն նպաստառուների համար, ովքեր ԱՄՆ քաղաքացի կամ հպատակ են (DHCS 0002)»:
- Եթե մնացած չափանիշներով Դուք համապատասխանում եք լիարժեք «Medi-Cal»-ի նպաստներ ստանալու պահանջներին, ապա այդ 90-օրյա ժամկետում Դուք կստանաք այդ նպաստները:
- Եթե շրջանը Ձեզանից ընդունելի փաստաթղթեր չստանա, ապա 90-օրյա ժամկետի ավարտից հետո Ձեր նպաստները կկրճատվեն և կդադան սահմանափակ նպաստներ: Այժմ մենք **ՉԵՆՔ** կրճատում Ձեր նպաստները: Եթե ապագայում Ձեր նպաստները կրճատվեն, այդ մասին մեկ այլ ծանուցում կուղարկվի:

Սահմանափակ նպաստները ներառում են միայն շտապ բուժօգնության, հղիության հետ կապված և երկարատև խնամքի ծառայությունները: Եթե Դուք համոզված չեք այն բանում, թե արդյոք որևէ ծառայություն շտապ բուժօգնության, հղիության հետ կապված կամ երկարատև խնամքի ծառայություն է, դիմեք Ձեր բուժսպասարկողին:

Այս հարցը կարգավորելու համար Դուք կարող եք մաս դիմել SSA-ի գրասենյակ: Եթե SSA-ը համաձայնի փոփոխություն կատարել իր տվյալների մեջ, որ դրանք ցույց տան Ձեր ԱՄՆ քաղաքացիությունը և ինքնությունը, Դուք պետք է այդ մասին տեղյակ պահեք Ձեր գործով զբաղվող շրջանային աշխատակցին: Դրանից հետո շրջանը կրկին հարցում կուղարկի Ձեր ԱՄՆ քաղաքացիության և ինքնության հաստատման մասին:

Սույն ծանուցումը պահանջվում է «Welfare and Institutions Code»-ի section 14011.2-ի համաձայն: